ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

04.12.2025թ. N 02/16.4/20086-2025

«ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն
պարոն Նորիկ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ
էլ.փոստի հասցե՝ info@seismshin.am

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Բունիաթյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2024 թվականի փետրվարի 22-ին կնքվել է «Արևային էլեկտրակայանների նախագծման նորմեր» ՀՀ շինարարական նորմերի մշակման (տեղայնացման) աշխատանքների N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-24/10 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից 2025 թվականի նոյեմբերի 28-ի N Ն/14.2/11010-2025 զեկուցագիրը և Պայմանագրի 2.1.3 կետը՝ Պատվիրատուն 2025 թվականի դեկտեմբերի 4-ից Պայմանագիրը միակողմանի լուծում է:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2025 թվականի դեկտեմբերի 4-ին կտեղադրվի տեղեկագրում, որին հաջորդող տասներորդ օրացուցային օրը կկայացվի Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումն Ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու մասին: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր կտրամադրվի լիազորված մարմնին և Ընկերությանը:

Եթե մինչև Պատվիրատուի ղեկավարի որոշման կայացման վերջնաժամկետը լրանալու օրը ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի

«900005000758» և «900008000664» հաշվեհամարներին Ընկերության կողմից վճարվեն պայմանագրի և որակավորման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ և 1 800 000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ապա Պատվիրատուն Ընկերությանը Ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Հարգանքով՝

պարտականությունները կատարող՝

Ստորագրող
ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ
1810760100

2025-12-04 15:07:22 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ Հասմիկ Բաղինյան, Հեռ: 011621822
Կատարող՝ գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան, Հեռ: 011621722